

ՄԱՆՐԱՆԿԱՐԻ Զ Ա Վ Ա Գ

(ՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՆ ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ)



այկական հին մանրանկարչությունը մեր մշակութային ժառանգության թերևս ամենից լրիվ պահպանված բնագավառն է։ Մինչև այժմ մեզ հասած և աշխարհի տարրեր քաղաքների թանգարաններում գտնվող մոտ 25 000 հայկական ձեռագրերի մեծ մասը գտնվում է Երևանում և խնամքով պահպանվում է Պետական մատենադարանում։

Չեռագրերի այդ արժեքավոր հավաքածուն դեռևս լրիվ չի ուսումնասիրված։ Մանրանկարչության դպրոցներ, ինչպես նաև առանձին մեծանուն վարպետների ստեղծագործություններ գիտական գնահատության շեն արժանացել և ցարդ ստվերի մեջ են մնում։

Այս հոդվածի նպատակն է համառոտակի լուսաբանել ԺԴ դարի առաջին կեսի հայ տաղանդավոր մանրանկարի Ավագի ստեղծագործությունները։

Մեզ հասած ձեռագրերի հիշատակարաններից պարզվում է, որ Ավագը ճնշել է Մոշախայուրում (Արևելյան Հայաստան), սովորել է Գլածորի համալսարանում («Երկրորդ Աթէնք պահնծալի»), նաև վարդապետ Նշցու մոտ։

Ավագը ապրել է ստեղծագործել է ոչ միայն Մյունիֆրում, այլև Ղրիմում, Ալտավաստականում, Փալտակարանում, Կիրիկիայում, մի խոսքով, ինչպես Ռ. Գ. Դրամբյանն է բնորոշել, «նա ըստ երևույթին մի տեղ երկար շմնացած ոչ նստակյաց նկարի էլու¹։

¹ Ռ. Դրամբյան, «Հայկական մանրանկարչությունը և ծաղկելու արվեստը», Տե՛ս «Ալկնարկներ Հայաստանի արվեստի պատմության մասին», Հոգվածների ժողովածու, «Արվեստ» հրատարակություն, Մոսկվա-Լենինգրադ, 1939, էջ 24 (ոռուերեն)։

Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանը² և Ռ. Գ. Դրամբյանը³, նշելով հանդերձ, որ Ավագը ծասայի վարդապետ Նշցու աշակերտներից է, միննույն ժամանակ ասում են, որ «որոշ վերապահությամբ» միայն կարելի է Ավագին դասել Գլածորյան դպրոցի մանրանկարիչների շարքում։ Եվ իսկապես, չի կարելի պնդել, թե Ավագը ամբողջովին Գլածորյան դպրոցին է պատկանում։ Մյուս կողմից, սակայն, ճիշտ չի լինի ասել, թե նա այդ դպրոցի հետ ունի չունի⁴։ Ճիշտ է, Ավագը իր ստեղծագործություններում հարում է Գլածորյան վարպետներին, սակայն թե՛ ժամանակով և թե՛ իր գործունեությամբ նա չի կարող լրիվ համարվել Գլածորյան դպրոցի վարպետ։ Բանն այն է, որ նա սկզբում սովորել է Գլածորում, Ավագյան հետաքայում, ինքնուրուցն ստեղծագործական ուղղությունում, ավելի զարգացրել է Գլածորյան մանրանկարչության և առաջին հերթին Մոմիկի և Թորոս Տարոնացու ավանդությունները և ստեղծել ինքնատիպ ու որակով նոր ստեղծագործություններ։

² Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյան, «Խաղականիքանը կամ Պոռշյանը հայոց պատմության մեջ», մասն Բ, Երևանպետ, 1944, էջ 242—243։

³ Ռ. Դրամբյան, նշված աշխատառթյունը, էջ 23։

⁴ Այսպես, օրինակ, արվեստաբաններ Ա. Ն. Սվերդլովը և Վ. Ն. Լազարելը մանրանկարի Ավագին սիստեմը համարում են Ղրիմի մանրանկարչության դպրոցի ներկայացուցիչ։ Տե՛ս Ա. Ն. Սվերդլով, «Հին Հայաստանի մանրանկարչությունը», «Արվեստ» հրատարակություն, Մոսկվա—Լենինգրադ, 1939, էջ 93 (ոռուերեն)։ — Վ. Ն. Լազարել, «Բյուզանդական կենդանագործության պատմություն», Ա. «Արվեստ» հրատարակություն, Մոսկվա, 1947, էջ 251 (ոռուերեն)։

Ավագը նկարազարդել է բազմաթիվ ձեռագրեր. նա ձեռանդուն մանրանկարիչ էր: Ավագի նկարազարդած ձեռագրերից մեզ մինչև այժմ հայտնի են հետեւյալները.

1. 1329 թվականի Ավետարան (*Մատենադարան*, № 7650).

2. 1337 թվականի Ավետարան (*Մատենադարան*, № 212).

3. հազգիրք (*Երգարան*) 1338 թվականի? (*Բենլին*, Կայսերական գրադարան)⁵.

4. 1338 թվականի Աստվածաշուման (*Մատենադարան*, № 4429)⁶.

5. 1341 թվականի Աստվածաշուման (*Վենետիկ*)⁷.

6. 1352 թվականի Ավետարան (*Մատենադարան*, № 7631).

7. «Օշին թագավորի Աստվածաշում»,
1314—1358 թ. թ. (*Մատենադարան*, № 6230)⁸.

Այս ձեռագրերը նկարազարդվել են տարբեր վայրերում և տարբեր ժամանակներում, սակայն նրանց իկոնոգրաֆիկ ու ոճային նմանությունը մեզ համոզում է, որ դրանք Ավագի ձեռքի արդյունքն են, բացի, անշուշտ, մեկից՝ 1352 թվականի Ավետարանից, որտեղ նկատվում է մի ուրիշի կիլիկյան վարպետ Սարգիս Պիծակի ձեռքը: Այսպիսով, Ավագի ամենավաղ շրջանի գործը կրում է 1329 թվականո, իսկ ամենաուշը՝ 1358 թվականը:

Ավագից մեզ հասած նկարազարդումները բնորոշում են նրա շուրջ 30 տարվա մի շրջան ընդգրկող ստեղծագործական ուղին:

Չնայած Ավագի խոստովանությանը, որ ինքը թորոս Տարոնացու աշակերտն է եղել, որի նկարազարդած ձեռագրերը Ավագից անրաժման էին նույնիսկ նրա բազմաթիվ ճանապարհորդությունների ու թափառումների լնթացքում, և չնայած այն բանին, որ Ավագի ու Թորոս Տարոնացու ստեղծագործությունների միջև լնդհանուր ինչ-որ բան կա, պետք է, այնուամենայնիվ, նշել, որ Ավագը, իրեւ արվեստագետ մանրանկարիչ, ապրեց ստեղծագործական ինքնուրույն ու յուրահատուկ զարգացում:

Ավագի ստեղծագործությունների ակունքները հարուստ են ու բազմազան: Նրա աշխատանքների վրա նկատվում է հատկապես Մոմիկի և Թորոս Տարոնացու ազդեցությունը,

⁵ Գարեգին արմենիակոպոս Հովսեփյան, հշված աշխատությունը, էջ 243.

⁶ Զեռագիրք գրին է հայտնի գեղագիր Միկիթառ Անեցին:

⁷ Լ. Ս. Խաչիկյան, «ԺԴ գարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Երևան, 1950, էջ 328:


⁸ Զեռագիրք գրվել է Կիլիկիայում 1314 թվականին. Իսկ ավագի կողմից՝ ինքնի նկարազարդվել է 1358 թվականին Ավագի կողմից:



ՔՐԻՍՏՈՍԻ ՇՆՈՒՐԴԻԲ,
ՕՇԻՆ ԹԱԴԱՎՈՐԻ ԱՍՎԱԾԵՆՁԻՑ

և կարելի է ասել, որ Ավագի ստեղծագործությունները կատարվել են Գլածորի մանրանկարչության դպրոցի այդ փայլուն վարպետների ստեղծագործական ավանդությունների ու նվաճումների հիման վրա: Այնուամենայնիվ նորից պետք է նշել, Ավագը չի սահմանափակվում այդ վարպետների և բնդհանրապես Գլածորի դպրոցի մանրանկարչության ավանդություններով: Նա առավել ևս զարգացրեց Մոմիկի և Թորոս Տարոնացու արվեստի ավանդությունները և, որպես այդպիսին, նա նրանց հետեւյալների մեջ առանձնակի տեղ է գրավում: Ավագը ուսումնասիրի է ոչ միայն Մոմիկի ու Թորոս Տարոնացու այլև Թորոս Ռոսլինի և իրեն նախորդող լավագույն այլ մանրանկարիչների գործերը, մշտապես ունենալով ստեղծագործական մոտեցում գեպի նրանց արվեստը: Ավագի գործերի ընորոշ գծերը խոսնմ են այն մասին, որ նա քաջ ծանոթ է եղել կիլիկյան վարպետ ծաղկողների արվեստին:

Մանրանկարչության մեջ Ավագը ձգտում էր լուծում տալ մի շարք խնդիրների, որոնք առաջ էին քաշված գեռևս այդ արվեստի զարգացմանը նախորդող շրջանի և հատկապես Գլածորի դպրոցի կողմից: Այդ խնդիրները տեսապես զբաղեցրել են Ավագին և



ՀԱՎԱՎԱՆԵՐԻ, ՕՇԽՆ ԹԱԳԱՎՈՐԻ ԱՍՏՎԱԾԱՆՉԱՒՑԻՑ

դարձել նրա ստեղծագործական որոնումների նշանաբանը: Զնայած այն հանգամանքին, որ Ավագը հետևում էր իրեն նախորդող մանրանկարիչներին, պետք է ընդգծել, սակայն, որ նա ուներ իր ինքնատիպ ոճը, իր անհատականությունը, որոնք իրենց փայլում արտահայտությունն են գտել նրա նկարազարդած ձեռագրերում և արվեստի գործերում:

Ավագի ստեղծագործություններից մեջ հասած 1329 թվականը կրող մի Ավետարանում խորաններին հաջորդող էջանոց նկարազարդումները, հիմնականում, կատարվել են ըստ հայկական հին ավանդության, որի համաձայն ավետարանական տեսարանների հետ, որպես կանոն, նկարում էին նաև պատվիրատուններին (թվով 12 և ավելի):

Ավագի ստեղծագործություններին բնորոշ մեկ ուրիշ սկզբունք իր լրիվ արտահայտությունն է գտել նրա նկարազարդած 1337 թվականը կրող մի Ավետարանում: Այստեղ Ավագը նոր ձևով է մեկնարանել Ավետարանը նկարազարդելու խնդիրը: Նա գնացել է տեքստը նկարազարդումներով՝ լուսաբանելու ուղիով: Էջանոց նկարներից բացի,

մանր ֆրիզ-նկարազարդումներով՝ տեքստը լուսաբանելու ավանդությունը գալիս է Կիլիկիայից⁹: Ավագը իր հետագա ստեղծագործություններում, սակայն, շի կարողանում այդ գիծը զարգացնել, որովհետև նա մեծ մասսամբ նկարազարդում էր արդեն գրված ձեռագրերը, որոնցում գրչի կողմից սյուժետային նկարների համար թողնված էին լինում խիստ փոքր տարածություններ:

1337 թվականի Ավետարանն արտագրել է ինքը Ավագը: Արվեստագետն այստեղ յուրաքանչյուր էջում նկարազարդման համար լայն տեղ է թողել այն հաշվով, որ նկարազարդումը որքան կարելի է լրիվ լուսաբանի տվյալ էջի տեքստը:

Ավագի նկարազարդումներում հատկապես դրսենորվել է նրա լակոնիկ և միենույն ժամանակ հանրամատչելի պատմողական շնորհքը: Այս մոտեցումը Ավետարանի մեկնարանման ավելի ընդարձակ ձևն է:

Ավագի մոտ Քրիստոսի պատմության շարքը կարծես մարդու կյանքի պատմություն լինի: Թվում է, թե նա Քրիստոսի կյանքում տեսնում է միայն նրա երկրային տանջանքները: Հենց դա է պատճառը, որ Ավագի մոտ պատկերված են մեծ մասմարդունությունը անձանց կյանքի հետ կապված տիսուր տեսարանները, նրանց վշտագին ապրումները, որոնք կարծես հանդիսանում են նկարազարդումների այդ շարժառիթը:

Այս տեսակետից մենք համարձակվում ենք Ավագի մանրանկարները բաղդատել Ժդդարի վերջին քառորդի իտալացի մեծատաղանդ նկարի Դուչչոյի ստեղծագործությունների հետ: Վերջինիս մոտ նույնպես Քրիստոսի շարժարանքները կազմում են հեղինակի ստեղծագործությունների հիմքը: Երկու նկարիների մոտ էլ ավետարանական պատմումների շարքերում առաջին պլանի վրա է մարդը՝ իր ապրումներով, իսկ օրնամենտներն ու գեկորատիվ զարդարմութիվները մըղ-ված են հետին պլան:

Իր նկարներում գործող յուրաքանչյուր անձի մեջ Ավագը տեսնում է կենդանի մարդուն, հենց դրա համար էլ նրա գործերուն ուժեղ դրամատիկմը համարյա միշտ զուգորդված է գլխավոր անձանց հոգեկան ապրումների հետ, որը և Ավագի ստեղծագործությունների էական առանձնահատկություններից մեկն է կազմում:

Դեպի մարդն ունեցած Ավագի վերաբերմունքը շատ բանով հիշեցնում է այն նկար-

⁹ Սիրացի Տեր-Ներսեսյան, «Հայաստան և Բյուզանդական կայսրությունը, Հայ արվեստի և քաղաքական կրթության համառոտ ուսումնագրություն», Գեմքը, Մեսեղուսեց, Հարվորդ համալսարանի տպարան, 1947 էջ 133 (անգլերեն):

շին, որի գործերը վերագրվում են Թորոս Ռուլինին: Մարդը նրա մոտ ընկալվում է ոչ որպես սոսկ մարմին, ժավալ և ամուր կառուցվածք ունեցող անձ: Մի շարք մանրանկարներից երեսում է, որ նրան առանձնապես հետաքրքրել է պատկերվող մարդու ներաշխարհը: Այսպիսի մեկնաբանումը վկայում է այն մասին, որ Ավագը նոր տեսանկյունից է նայել մարդուն ու նրան շրջապատող իրականության:

Կյանքի ծանր տանջանքները արիարար կրող և իրականությանը հանդարտությամբ նայող ուժեղ մարդու կերպարը կարմիր թելի նման անցնում է Ավագի ողջ ստեղծագործությունների միջով:

Ավագի գործերում ճշգրիտ և համաշափ ֆիգուրաները ունեն իրենց ծավալային ձևեր: Մարդկանց մարմինների ծավալայնությունը և պլաստիկան արտահայտված են նրանց հագուստների բնական ծալքավորությունով, որը համապատասխանում է ֆիգուրաների ուժեղ և ճկուն շարժումներին: Պետք է նշել և այն, որ Ավագի ոչ մի մանրանկարում ստատիկ ֆիգուրաներ չկան, և մեծ տեղ է տրված շարժմանն ու գործողություններին: Ֆիգուրաների դինամիկ շարժումները, նրանց ժևառերը, որ Ավագի ստեղծագործություններում հաճախ դուրս են գալիս մանրանկարի շրջանակներից, կազմում են նրա արվեստի մեկ ուրիշ հատկանշական կողմը:

Ինչպես ճիշտ է նկատել Ա. Ն. Ավիրինը, Ավագի մանրանկարներում համարյա ներքեմի պլանի գիծը ալիքավոր է, որտեղ խոտերն ու ծաղիկները ալեծփալով կարծես թե բնդգում են ֆիգուրաների շարժումները¹⁰: Պետք է ասել, որ Ավագի մոտ սկզբնաղբյուր են ծառայել նրա կենդանի գիտումներն ու հետևողական գիտումները, որոնք և մանրանկարի վրա տրված են դինամիկայի առավել շեշտվածությամբ: «Օշին թափավորի Աստվածաշնչում» բավական է նայել Ավագի նկարազարդումներից թոշող թոշունին (էջ 439ր), կամ էլ 1352 թվականի Ավետարանում նրա նկարած ագուավներին (էջ 13թ—14ա), որպեսի համոզվենք նկարչի ինորաթափանց աշքին ու սուր դիտողականությանը: Նույն արժանիքի մասին է վկայում նրա «Քրիստոսի ծնունդը մանրանկարը, նույնպես «Օշին թափավորի Աստվածաշնչից», որը հանդիսանում է Ավագի լավագույն գործերից մեկը (էջ 399ր): Այստեղ պատկերված ֆիգուրաների մեջ աշքի է լնկնում ձեռքը մեկնած կնոջ կերպարը, որն զգուշությամբ ստուգում է ցրի շերմաստիճանը՝ ավագանի մոտ մանուկ Հիսուսին լողացնելու համար: Այս տեսա-



ԽԱԶԵՑ ԽԾԵՑՈՒՄԸ, 1337 ԹՎԱԿԱՆԻ ԱՎԵՏԱՐԱՆԻՑ

րանում զգացվում է նկարչի նուրբ դիտողականությունն ու բնականությունը: Նույնպիսի անկեղծությամբ են Հորինված Հովիվների ֆիգուրաները, ծերունին՝ ձեռքին փայտում մախաղ և պատանի հովիվը, որը նստել է այծի վրա ու սրինդ է նվազում: Գեղեցիկ է տրված Տիրամոր կերպարը: Նրա ողջ արտաքինը, դեմքի օվալը, զեղեցիկ ու արտահայտիչ ալքերի հայացքը, ինչպես նաև պարոն Սորիսթմիշի և նրա կողմանի թեկի-խաթունի դիմագծերն ու շատ նորր գծագրված հագուստները խոսում են նկարչի բնության հետ ունեցած սերտ կապի մասին, հատկապես այն դեպքում, երբ նա համեմատարար քիչ է կապված եղել ավետարանական տեսարանների պատկերման կանոններին:


Իր ստեղծագործություններում Ավագը հմտություն էր ձեռք բերել այս կամ այն ֆիգուրայի միջոցով մարդու անհատականությունը բացահայտելու մեջ: Այսպես, օրինակ, Քրիստոսի կերպարը նրա բոլոր մանրանկարներում ոչ միայն պահել է իր տիպացին ընդհանուր նկարագրիրը, այլև յուրաքանչյուր գեպքում շեշտված է նրա հոգեկանի այս կամ այն կողմը:

¹⁰ Ա. Ն. Ավիրին, Հիշված աշխատաթյունը, էջ 98:

Ավագի մանրանկարներում նկատելի է նաև հատուկ սեր դեպի դիմանկարը թյունը: Նա, ինչպես մեզ հայտնի է «Օշին թագավորի Աստվածաշնչից», «Քրիստոսի ծնոնդի» տեսարանում նկարել է ձեռագրի պատվիրատուներին, իսկ 1329 թվականի Ավետարանում ձեռագրի պատվիրատու Ասլանի հետ մեկտեղ նկարել է նաև իրեն:

Նկարի Ավագը նկարազարդման արվեստի մեջ Գլածորի գպրոցից ժառանգեց ձրգում դեպի պարզությունը: Այդպիսին են նրա սյուժետային տեսարանները Ավետարանների շարքից: Նա Գլածորի ծաղկողներից ժառանգեց նաև տարածականության պատրանք հաղորդելու այն արվեստը, որն արտարակում է մանրանկարների շրջանակներյատվում:

Կայն ավելի շատ՝ Գլածորի գպրոցի վարպետ Թորոս Տարոնացու հետ: Բավական է համեմատել Ավագի նկարազարդած ձեռագրերի խորանները Թորոս Տարոնացու խորանների հետ (օրինակ, Ավագի 1337 թվականի Ավետարանի և Թորոս Տարոնացու 1318 թվականի «Եսայի Նեցու Աստվածաշնչի» կամ էլ 1317 թվականի Աստվածաշնչի խորանները), և ահա պարզ կերևան նրանց միջն եղած կոմպոզիցիայի, օրնամենտների և զարդամուկների շատ ընդհանրություններ: Սակայն, չնայած այս բանին, Ավագի նկարազարդումներում կա սկզբունքային մի տարրերություն, որն ի հայտ է գալիս հատկապես կատարման ոճի մեջ: Ավագի գործերը տարրերվում են իրենց գեղեցիկ համաշափություն-



ԽՈՐԱՆՆԵՐ, 1337 ԹՎԱԿԱՆԻ ԱՎԵՏԱՐԱՆԻՑ

րի շնորհիվ: Նրա մոտ ոչ միայն շրջանակի մեջ են առնվում ֆիգուրաներն ու առարկաները, այլև հաճախ կիսվում է այդ ֆիգուրաների մի մասը, որը, ինչպես հայտնի է, զգալիորեն շեշտում է տեսարանի խորությունը:

Նկարազարդման արվեստի մեջ Ավագը հանդես է բերել ինքնուրուց ստեղծագործական մոտեցում: Այդ երեսում է ոչ միայն իկոնոգրաֆիաներում կամ ավետարանական սյուժետային տեսարանների կոմպոզիցիաներում, այլև գեկորատիվ զարդամոտիվներում: Այս վերջիններով Ավագը մեծ մասամբ կապվում է կիլիկյան վարպետների հետ, սա-

ներով, նրանք հորինված են ավելի գեղանկարչական վարպետությամբ և ավելի զուապ են ու վեհ: Նույն տարրերությունը նկատվում է նաև երկու նկարիչների անվանաթերթերում ու գիմագրերում:

Մյուս ընդհանուր գիծը, որ Ավագին կապում է Գլածորի հետ, ճարտարապետական մոտիվների օգտագործման եղանակներն են նկարչության մեջ: Ավագը կարողանում է այդ մոտիվները ներդաշնակել նկարում պատկերված ֆիգուրաների հետ, գտնում է նրանց ճշգրիտ համեմատական հարաբերակցությունը և այս տեսակետից նա նորից

կանգնում է Թորոս Տարոնացու կողքին: Դրա վառ ապացույցն են «Տյառնընդառաջ», «Քրիստոսը աշակերտների հետ» և ուրիշ մանրանկարներ: Սակայն Ավագի օգտագործած ճարտարապետական մոտիվների մեջ հանդիպում ենք այնպիսի տարրերի, որոնք հատուկ են բյուզանդական մանրանկարներին ու գոթական ոճին: Արևմտյան մոտիվներ նկատվում են Ավագի «հաշելություն» նկարում, որը Քրիստոսը մեկ գամով է խաչված:


Խոսելով Ավագի ինքնատիպության մասին, պետք է նշել նաև նրա լուսա և լսութեր գործածելու յուրահատուկ շնորհը, գեղանկարչական ծեփվածքի այն առինքնող դեղեցկությունը, որն արտահայտված է երանգների նուրբ անցումներով: Ավագը օգտագործում էր նաև գունային հակագրությունը: Այսպես, «Օշին թագավորի Աստվածաշնչից» «Քրիստոսի ծնունդը» տեսարանում Տիրամոր դեմքը, որ տրված է մուգ-կանաչագույն երանգներով և տեղ-տեղ թարմացված է կարմիր բծերով, հակագրված է Մանուկ Քրիստոսի ավելի բաց երանգներով տրված դեմքի հետ: Այստեղ կարմիրի ու կանաչի օգտագործումը ուժեղացնում է գունային հակագրությունը: Գեղանկարչական այս հնարանների և ներկերի նուրբ ծեփվածքի շնորհի է, որ Ավագի մոտ այնքան լավ է զգացվում ծափալայնությունը: Սակայն նշենք, որ Ավագի գործածած ներկերը այնքան էլ բարձրորակ չեն ենթել, որի պատճառով էլ նրա նկարները նկատելիորեն խունացել և տեղ-տեղ էլ նույնիսկ սեացել են:

Ավագի գեղանկարչական վարպետությամբ հորինված մանրանկարները թողնում են որմանկարների տպավորություն և, որ գիխավորն է, իրենց ոճով ավելի վեհաշուր են: Այս բանը պարզ երևում է նրա շատ մանրանկարների կուռ կոմպոզիցիաներում:

Ավագի արվեստը մեծ է նաև իր գեղարվեստական բարձր կուլտուրայով, որը նրան մոտեցնում է մանրանկարչության անվանի վարպետներին:

Ավագի արվեստը Մոմիկի և Թորոս Տարոնացու համեմատությամբ մի քայլ առաջ է, Ավագի մանրանկարները նոր որակ են հայ հին մանրանկարչության մեջ և, ինչպես Ռ. Գ. Դրամբյանն է բնորոշել, նա ավելի մեծ և բազմակողմանի արվեստագետ է, քան նրա ավագ ժամանակակից Թորոս Տարոնացին¹¹:

Ավագը գեղարվեստական մեծ շնորհի, ստեղծագործական բուռն խառնվածքի տեր արվեստագետ է, պարզ ու վեհ կերպարների



ԽՈՐԱԿ, 1352 ԽԱՅԱԿԱՆԻ ԱՎԵՏԱՐԱՆԻՑ

վարպետ հեղինակ: Կարելի է համարձակուրեն նեթագրել, որ Ավագը դազգահային գեղանկարչությամբ և որմանկարչությամբ է զբաղվել¹²: Հավանաբար այն վայրերի ուսումնասիրությունը, որոնց հետ կապված է Ավագի անունը, կհաստատեն այս հնֆարությունը:

Ավագի, ինչպես և նրա ժամանակակից ուրիշ նկարիների արվեստը քաղաքական, տնտեսական անրարենապաստ պայմանների հետևանքով շի ծափալվել ամբողջ լայնքով ու լիությամբ: Սակայն Ավագը, ինչպես նրա վաֆած է Ա. Ն. Սվիրինի մոտ, «իր ստեղծագործություններով ժամանակակից առաջավոր արվեստի բարձրության վրա էր կանգնած»¹³:

Մանրանկարից Ավագի գլուխ-գործոց մանրանկարները անկասկած պետք է մասնագետների ուշագրությունը գրավեն՝ ավելի խոր ուսումնասիրելու համար նրա «փոքրածավալ, բայց ըստ էության մեծ արվեստը»¹⁴:

12 Բնդ հանրապես Ավագի մանրանկարների ոճն ու բնույթը և մասնավորապես 1338 թվականի Աստվածաշնչի մանրանկարները իրավունք են տալիս այդպիսի նեթագրության:

13 Ա. Ն. Սվիրին, նշված աշխատաթիւնը, էջ 99:

14 Ա. Գրամբյան, նշված աշխատաթիւնը էջ 27: